



ԼՈՒՍԱՌՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Ջ. ՏԱՐԻ, ԹԻՒ 10, Սեպտեմբեր 2023



ԴԱՌՆԱԼ ՎԿԱՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՓՐԿԱՐԱՐ ԶՈՀԱԲԵՐՈՒԹԵԱՆ

Խաչվերացի Տօն:
Խաչի խորհուրդ եւ խաչեալի պատգամ:

«Ան որ իր խաչը չառնէր եւ ինծի չի հետեւիր, արժանի չէ ինծի» (Մտ. 10:38):

Դարերու խորքէն եկող եւ տակաւին դարերու խորքը գացող պատգամ ուղղուած անցեալի, նոյնիսկ եւ քալիք սերունդներու ողջ մարդկութեան:

Իրաքանչիւր քրիստոնեայ անհատ կանչուած է խաչ ունենալու, խաչը վերցնելու, Խաչեալին աշակերտելու եւ հետեւելու համար:
Խաչը ունենալու համար նախ պէտք է փնտռել եւ գտնել ու ապա վերցնել եւ շալկել զայն, արժանի դառնալու Իրեն, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի:
Բոլոր քրիստոնեաները կանչուած են, խաչեալին աշակերտելու:

«Եթէ մէկը ուզէ ինծի հետեւիլ թող ուրանայ իր անձը, առնէ իր խաչը եւ ետեւէս գայ» (Մտ. 8:34):

Ինչ է Խաչի խորհուրդը:
Եթէ կ'ուզենք լայնօրէն բացատրել.-

- Խաչը կեանքի յաղթանակն է մահուան նկատմամբ:
- Խաչը սիրոյ յաղթանակն է, վկայութիւնն է այն սիրոյն, անսահման սիրոյն, որ Աստուած ունի մարդուն նկատմամբ:
- Խաչը վկայութիւնն է Աստուծոյ ողորմութեան:
- Խաչը խաչեալով սկիզբն է փրկագործութեան:

Յովհաննէս Ոսկեբերան հայրապետ երբ խաչի մասին կը խօսի հետեւեալը կը բանաձեւէ « Խաչը խաչեալով կը դառնայ ազնիւ եւ կենարար: Խաչը հիմքն է եկեղեցւոյ եւ յոյսն է քրիստոնէութեան: Խաչով սատանան պարտուեցաւ եւ մարդը փրկութեան ճանապարհը գտաւ»:

Մէկ խօսքով սեփական խաչը ունենալ կ'ենթադրէ քաջութիւն, զոհաբերութիւն յաղթահերելու համար ամէն տեսակի դժուարութիւն:

Խաչով տառապանքի մէջ յոյս կը գտնենք, սակայն մոռնալով մեր անձերը, փնտռելու եւ գտնելու ու մանաւանդ վստահելու Իրեն:

Ի վերջոյ խաչը մեզ երկինք առաջնորդող եւ դրախտի դռները բացող միակ ապահով բանալի է:

Հետեւաբար Խաչը ինչպէս երէկ, այսօր եւ վաղը նոյնպէս կը հրաւիրէ ու պիտի հրաւիրէ վերադառնալ Աստուծոյ: Աստուծոյ ողորմութիւնը պատրաստ է մեզ գրկելու եւ բուժելու մեր վէրքերը:

Հետեւաբար խաչի ճանապարհին առանձին չենք: Յիսուս Քրիստոս մեզի հետ է, մեր կողքին է, կ'օգնէ եւ կը քաջալերէ մեզ քալել այդ ճանապարհէն, գիտակից եւ արդար պատերազմը մղելու եւ յաղթահարելու:

Թող Տէրը Յիսուս Քրիստոս Իր Խաչով ամրապնդէ մեր հաւատքը եւ սէրը, յոյսով լեցուած քալենք խաչի ճանապարհէն առաւել հաստատակամ ու վճռակամ, դառնալու վկաները Քրիստոսի փրկարար զոհաբերութեան:

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Քրիստոսի հետ խաչին վրայ մեռայ եւ այլեւս կենդանի եմ.
Ես չէ որ կ'ապրիմ, այլ՝ Քրիստոս է որ կ'ապրի իմ մէջս:
Այս կեանքը, որ այժմ կ'ապրիմ մարմնով, կ'ապրիմ՝
հաւատալով Աստուծոյ Որդիին,
որ զիս սիրեց եւ իր կեանքը զոհեց ինծի համար»
(Գաղատացիս 2:20):

Սուրբ եւ Կենարար Խաչը մեծարուած է բոլոր եկեղեցիներուն կողմէ: Ինչպէս որ Սուրբ Կոյս Աստուածամայրը իր դերը ունեցաւ փրկագործութեան ծրագրին մէջ, նոյնպէս ալ Խաչը իր իւրայատուկ տեղը ունեցաւ:

Եղեմի պարտէզին մէջ մեր նախածնողները՝ Ադամն ու Եան, անհնազանդ գտնուելով ճաշակեցին բարիի եւ չարի գիտութեան ծառէն եւ արտաքսուեցան դրախտէն, որպէսզի Կենաց Ծառին չմօտենան: Աստուծոյ Միածին Որդին, Իր անսահման սէրէն մղուած Խաչի մահով սրբագործեց խաչը: Խաչեալով խաչը նոր իմաստ ունեցաւ: Խաչեալին ինքնազոհողութեամբ, Խաչի խորհուրդը բոլոր հաւատացեալներուն համար դարձաւ յաւիտենական կեանքը ժառանգելու փրկարար միջոց եւ Կենաց Նոր Ծառ:

Առնենք Տիրոջ Խաչին առաջնորդող ճանապարհին ուղղին եւ ընթանանք Խաչի ճանապարհէն: Քրիստոսի խաչին ճանապարհը դժուարէ այո, սակայն անոր աւարտը՝ քաղցր: Երբ ընթանանք խաչի ճանապարհէն, բնականաբար պիտի հանդիպինք դժուարութիւններու, երբեմն մեր ոտքերը քարերու պիտի զարնուին, փորձութիւններ պիտի ըլլան, նեղ պայմաներ պիտի ունենանք, սակայն այս բոլորը բարիով պիտի անցնին: Սուրբ Հոգին պիտի զօրացնէ մեզ, ինչպէս Հոգեգալուստին աշակերտներուն դողող սրտերը զօրացուց, նոյն ձեւով մեզ ալ պիտի զօրացնէ, որպէսզի Խաչի ճանապարհը կարենանք Խաչեալին նման քալել եւ ստանալ մեծագոյն վարձատրութիւնը՝ յաւիտենական կեանքը:

ՀԱՅՐ ՅԱԿՈԲ

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

«Գալով ինծի, քաւ լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ: Այդ խաչին միջոցաւ աշխարհը մեռած է այլեւս ինծի համար, ինչպէս ես մեռած եմ աշխարհին համար»:

“May I never boast except in the cross of our Lord Jesus Christ, through which the world has been crucified to me, and I to the world.”

Գաղատացիս 6.14

Galatians 6:14





**ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԸ՝
ԱՍՏՈՒԱԾԱՇՆՈՐՀ ՆԱՐԵԿԱՅԻՆ
(951-1003)**

Հայ բանաստեղծ, փիլիսոփայ, երաժիշտ, բոլոր ժամանակներու մեծ մտածող եւ միջնադարեան հանճարեղ հոգեւորական Գրիգոր Նարեկացիի կեանքի մասին ոչ շատ, բայց հաւաստի տեղեկութիւններ պահպանուած ու հասած են մեզի։ Յայտնի է, որ Գրիգոր Նարեկացին ծնած է Վասպուրական նահանգի Ռշտունի գաւառի, Վանա լիճի ափին գտնուող Նարեկ գիւղին մէջ՝ 951 թուականին։ Մանուկ հասակէն կապուած է Նարեկ գիւղի վանքին հետ։ Իրացնելով դպրոցի հարուստ գիտելիքները՝ Գրիգոր Նարեկացին յետագային դարձած է մեծ հռչակ ունեցած ուսման այդ կեդրոնի սիւներէն մէկը։ Ուսումը ստանալէն ետք՝ Գրիգորը վարդապետ ձեռնադրուած է նոյն Նարեկայ վանքին մէջ եւ ստացած Նարեկացի անունը։ Գրիգոր Նարեկացին ապրած է 54 տարի. վախճանած է 1003 թուականին եւ թաղուած Նարեկայ վանքին մէջ։ Անոր գերեզմանը ուխտատեղի եղած է շրջակայ հայ բնակչութեան համար, բայց Նարեկավանքը հիմնովին աւերակ դարձած է 1915 թուականին։ Նարեկացիէն մեզի հասած են մեծ թիւով գրուածքներ, որոնցմէ ամենահռչակաւորներն են տաղերն ու «Մատեան Ողբերգութեան» քնարական մեծ պոէմը։ Տաղերը 10-րդ դարու հասարակական կեանքի տրամադրութիւններու ցայտուն արտայայտութիւնն են, մարդու մարմնական գեղեցկութեան, ինչպէս եւ զգացումներու պատկերումը, իսկ «Մատեան Ողբերգութեան» պոէմը՝ մարդու ներքին աշխարհի, անոր խոհերուն եւ ապրումներուն, գերբնական ուժին եւ բարձրութեան աւելի խոր նկարագրումը։ Մարդու մարմնական գեղեցկութեան Նարեկացիի իտէալը Տիրամայրն է։ Ան կը պատկերէ անոր կանացի գեղեցկութիւնը՝ կենցաղային վառ երանգներով։

***Աչքն ծով ի ծով ծիծաղախիւր
Ծառայանայր յառաւօրուն,
Երկու փայլակնաձեւ արեգական նման.
Շողն ի ժմին իջեալ յառաւօրէ լոյս։
Վարսիցն երամից գարդ, երամից գարդ
Ոլորս են առեալ եռահիւսակն բոլորեալ այրիւք։***

Նարեկացին կը ցուցաբերէ զարմանալի նրբանկատութիւն բացայայտելու եւ պատկերելու մարդասիրական գաղափարը եւ բնութեան ստեղծած գոյներու գեղագիտական համադրութիւնները։ Բնութեան պաշտամունքի, գեղեցկութիւններու գովերգութեան ամենացայտուն արտայայտութիւնը Նարեկացիի «Վարդավառ»ի տաղն է։

***Գոհար վարդն վառ առեալ
Ի վեհից վարսիցն արփենից։
Ի վեր ի վերայ վարսից
Ծառալէր ծաղիկ ծովային։***

Հայ եւ համաշխարհային գրականութեան մէջ Նարեկացին հռչակաւոր է շատ աւելի իր **«Մարեան ողբերգութեան»** հանճարեղ պոէմով, որ կը պատկանի մարդկութեան ստեղծած գեղարուեստական մեծագոյն արժէքներու շարքին։ Աստուած Նարեկացիի համար ամէն տեսակէտով կատարելութեան իտէալն է։ Ան կը ձգտի հասնիլ Աստուծոյ եւ իր մարդկային բնութիւնը կատարելապէս խառնել ու միացնել Անոր էութեան հետ, եւ դեռ աւելին, ան կը գտնէ, որ մարդը կրնայ նոյնիսկ Աստուած ըլլալ...

Տէր իմ պարգեաւորո՛ւ, Տէր ի բնէ բարի, ամէնուն հաւասարապէս փրորող, ոչինչէն ամէն ինչ սրբեղծող, փառաւորուած, անքնին, ասեղ, ահարկու, սոսկալի, հզօր, սաստիկ, անբովանդակելի, անմերձելի, անըմբռնելի, անիմանալի, անճառելի, անսրեսանելի, անզննելի, անշօշափելի, անորոնելի, անսկիզբ, անժամանակ։

Եւ ահա սկիզբ կ'առնեն բանաստեղծի ողբերգական ապրումները եւ տարակուսանքները. Իսկ ինքը կրնայ միանալ Աստուծոյ, Աստուած դռնալ, երբ իր մեղքերը անընդհատ կ'աճին՝ հասնելով սոսկալի չափերու, մինչդեռ Աստուծոյ հասնելու համար պէտք է մարդու գործերու ու վարմունքներու, յոյզերու եւ զգացումներու աշխարհը ի սպառ մաքուր ըլլան ամէն տեսակ ապականութենէ ու բացասական գիծերէ։ Կատարեալ մաքրութեան հասնելու համար մարդ պէտք է խոստովանի ու անխնայ դատապարտէ իր գործած մեղքերը։ Նարեկացին անսահման յիշողութեամբ իրեն կը վերագրէ մեղքեր ու յանցանքներ, կը դատապարտէ այն բոլոր բացասականը, ինչ ան դիտած է մարդկային կեանքի ու իրականութեան մէջ։ Անոր կարծիքով մարդկային ծնունդներէն ոչ ոք իրեն չափ մեղաւոր եղած է եւ մարդոց գործած բոլոր հին չարիքներուն ինքը աւելցուցած է նորը։ «Վայ մեղաւոր անձիս, որ Արարիչս բարկացուցի. վայ կորուստի որդիիս, որ կենդանութեան պարգեւը մոռցայ. վայ անհատուցանելի բիւրատր քանքարներու պարտականիս. վայ դժնեայ մեղքերու ծանրակիր բեռնաւորիս, որ պիտի չկրնամ հանգստարանին դառնալ. վայ տէրունական պարտքերով ծանրաբեռնեալիս, որ պիտի չկրնամ ներկայանալ Հօրին»։

Պոէմը կը վերջանայ լաւատեսութեան յաղթանակով, փրկութեան եւ աստուածային էութեան հետ միանալու՝ աստուածանալու հաւատով, բայց միայն անկէ ետք, երբ անդառնալի կորստեան սարսափը վիթխարի չափերու կը հասնի։

Նայիրի Մկրտիչեան
(Շարունակելի 1)

**ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ
ԱՂՕԹՔԻ ՎԻՃԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ
ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ (ԲԱԺԻՆ Բ.)**

«Աղօթքի ժամանակ քրիստոնեաներուն պարահեղիքներուն եւ կարարելութեան աստիճաններուն մասին։ Արդեօք կարելի՞ է, որ քրիստոնեաներ հասնին կարարելութեան աստիճանին»։

3.- Աղօթքի ժամանակ լուսափայլ խաչի նշանը շատերու երեւցաւ եւ անոնց ներքին մարդուն կառչեցաւ։ Ոմանք աղօթքի կիսուն սքանչացան եւ իրենք զիրենք կանգնած գտան եկեղեցւոյ խորանին առջեւ, ուր իրենց կը տրուի ձէթով թաթախուն երեք նկանակներ, որմէ որքան ուտեն, այդքան եւ աւելի կը բազմանան։ Ուրիշ ատեն, երկրի վրայ նմանը չեղող հանդերձ մը, զոր մարդկային ձեռքը ի վիճակի չէ շինելու, կը բերուի աղօթողին, այնպէս՝ ինչպէս պատահեցաւ Տիրոջ այլակերպութեան ընթացքին, երբ անոր կերպարանքը փոխուեցաւ եւ արեւու նման ճառագայթեց. նոյնը կ'ըլլայ նաեւ այդ հանդերձին, եւ այն անձը, որ զայն կը հագնի՝ կը զարմանայ ու կը սքանչանայ։ Այլ պարագաներու, սրտին մէջ ծագող լոյսը ներքին եւ խորերը պահուող լոյսին մասին կը յայտնէ եւ անոր մասին կատարած իր խորհրդածութեան քաղցրութենէն կլանուած՝ չի՛ կրնար ինքզինք զսպել եւ խենթի պէս կ'ըլլայ անշուշտ, գերազանց սիրոյ քաղցրութեան եւ ծածուկ խորհուրդներուն պատճառով։ Եւ այդ պահուն, անձը ազատութեան մէջ կ'ըլլայ եւ կատարելութեան որոշ աստիճանի մը կը հասնի, ուր մեղքէն ազատ ու մաքուր կ'ըլլայ։ Սակայն, այս բոլորէն ետք, շնորհքը իր հրացայտ վիճակէն կը նահանջէ եւ դիմացը կը գտնէ հակառակորդին քողը։ Բայց հակառակ ատոր, շնորհքը մասնակիօրէն ինքզինք կը յայտնէ եւ ան կը կանգնի կատարելութեան աստիճաններուն խոնարհագոյնին, այսինքն՝ առաջին աստիճանին վրայ։

4. Կրնանք ըսել, որ կան տասներկու աստիճաններ, որոնցմէ մարդ պէտք է անցնի նախքան կատարելութեան հասնիլը։ Կրնայ պատահիլ, որ մարդ հասնի այդ աստիճանին, մտնէ կատարելութեան վիճակին մէջ եւ որոշ ատեն մըն ալ այնտեղ մնալ, սակայն ժամանակ մը ետք շնորհքը կը թուկայ եւ անձը աստիճան մը վար իջնելով տասնմէկերորդ աստիճանին վրայ կը կանգնի...։ Բայց շնորհքով հարուստ մարդը, միշտ, զիշեր ու ցերեկ, կը մնայ կատարելութեան, ազատութեան եւ մաքրութեան վիճակի մէջ, միշտ ափնքնուած եւ դէպի երկինք առնուած։

Արդ, այն մարդը, որուն այս սքանչելի ու հրաշալի երեւոյթները կը յայտնուին եւ զանոնք ճշմարտապէս կը փորձարկէ, մանաւանդ երբ անդադրում եւ յարատեւ կերպով այդ բաները անոր հետ ներկայ կ'ըլլան, ապա՝ ան անկարող կ'ըլլայ խօսելու, որեւէ գործի կամ աշխատանքի պատասխանատուութիւնը ստանձնելու եւ ոչ ալ՝ լսելու կամ իր եւ ուրիշներու կարիքներուն մասին հոգալու։ Այս պարագային, ան առանձինն անկիւն մը նստած հոգեկան բարձր եւ գիտմլցած վիճակի մը մէջ կ'ըլլայ։ Այս պատճառով ալ կատարելութեան աստիճանը տեսականօրէն չի տրուիր մարդուն, որպէսզի ան կարենայ իր եղբայրներուն պէտքերը հոգալ եւ Աստուծոյ խօսքին քարոզութեան ծառայութիւնը կատարել։ Ատով հանդերձ՝ «Թշնամութեան պատը քանդուած է եւ մահը՝ խափանուած» (տէս Եփ 2.14)։

5.- Այս վիճակը կը նմանի մթազնած եւ ամպով պատուած կանթեղի երեւոյթին, հակառակ անոր, որ կանթեղը ամէն ժամանակ լուսափայլ ու վառած է։ Այդպէս ալ այն մարդը, որ կը խոստովանի, կ'ըսէ, թէ ինք ոչ կատարեալ է եւ ոչ ալ ամբողջովին մեղքէն ազատ։ Ան կ'ըսէ, թէ մէջտեղի պատը քանդուած է, բայց կ'աւելցնէ նաեւ, թէ անկէ կարգ մը բաժիններ տակափն ամբողջովին չեն քանդուած։ Որոշ ժամանակ շնորհքը կը բոցավառի, կը մխիթարէ, կը հանգստացնէ եւ բարձրագոյն աստիճանի կը կենսաւորէ, իսկ ուրիշ ատեն ալ կը թուկնայ, լոյսը կը նուաղի եւ կը մթազնի։ Ատիկա կը պատահի շնորհքին յատուկ կարգաւորութեամբ եւ, ի մասնաւորի՝ մարդուն օգուտին համար։ Սակայն իմ է ան, որ յատուկ շնորհքով հասած է կատարելութեան աստիճանին, ճաշակած ու վայելած է վերի աշխարհը եւ կենդանի փորձառութեամբ ապրած է զայն։ Յարդ չեմ տեսած կատարեալ քրիստոնեայ մը, որ կատարեալ ազատութեամբ կ'ապրի իր կեանքը։ Անշուշտ, հոս ու հոն կը գտնուին քրիստոնեաներ, որոնք հանգստութեամբ շնորհքին մէջ կ'ապրին, կարգ մը աստուածային խորհուրդներուն խորքը կը թա- փանցեն, յայտնութիւններու կ'արժանանան եւ շնորհքին խորագոյն քաղցրութիւնը կ'ապրին, բայց այդ բոլորով հանդերձ, տակափն մեղքը ներկայ է իրենց մէջ։

Մարդիկ իրենց մէջ գործող առատ շնորհքին ու լոյսին պատճառով իրենք զիրենք ազատ ու կատարեալ կը համարեն, սակայն փորձառութեան պակասին պատճառով կը խաբուին։ Անոնք շնորհքին ազդեցութեան տակ են թէւ, բայց ցարդ կատարելապէս ազատ մէկը չտեսայ։ Ժամանակ մը, ես ալ անձնապէս մասնակիօրէն հասայ այդ աստիճանին, սակայն ճշմարտապէս սորվեցայ, թէ այդ աստիճանը, որուն հասած եմ՝ կատարելութեան վիճակը չէ։

Մեծն Սուրբ Մակար

ՍԱԽՈՒՂ ԵՒ ԴԱԻԻԹ

Սաւուղը երկար տարիներ թագաւորեց, սակայն ան այլեւս Աստուծոյ չէր լսեր եւ չէր կատարեր ինչ որ Աստուած կ'ակնկալէր։ Աստուած Սամուէլին ըսաւ.

- Սաւուղը այլեւս չի կրնար շարունակել Իսրայէլի թագաւորը ըլլալ, անօթիդ մէջ ինդ լեցուր եւ գնա՛ Յեսսէի մօտ՝ Բեթլեհէմ, որովհետեւ անոր որդիներուն մէջ կայ մէկը, որ արժանի է թագաւոր ըլլալու։

Սամուէլ Աստուծոյ ըսածին համաձայն Բեթլեհէմ գնաց։ Յեսսէն Սամուէլին ներկայացուց իր որդիներէն եօթն, սակայն Աստուծոյ ընտրեալը անոնցմէ մէկը չէր։

Սամուէլը հարցուց Յեսսէին.

- Ասոնք են բոլոր որդիներդ։

- Մէկն ալ կայ՝ կրտսերը, բայց ան հիմա ոչխարները կ'արածեցնէ, անոր անունը Դաւիթ է,- պատասխանեց Յեսսէն։

Սամուէլը ըսաւ.

- Մարդ ուղարկէ եւ զինք այստեղ բերել տուր։

Երբ Դաւիթը եկաւ, Աստուած Սամուէլին ըսաւ.

- Ա՛ն է։ Կանգնէ՛ եւ զինք թագաւոր օծէ։

Սամուէլը առաւ իւրով անօթը եւ օծեց Դաւիթը։ Այդ օրուրնէ սկսեալ Աստուած Դաւիթի հետ էր միշտ։

Սաւուղը նստած էր պալատին մէջ, բայց հանգիստ չէր, տանջալի մտքերով էր լեցուած, լաւ հասկնալով, որ Աստուած լքեր է զինք։

Այդ ժամանակ ծառաները միտք մը յղացան՝ ըսելով Սաւուղին.

- Կ'ուզեն քեզի համար տափղ նուագող մը գտնենք, որ կարողանայ իր երաժշտութեամբ քեզմէ վանել քեզ անհանգստացնող մտքերի։ Բեթլեհէմացի Յեսսէի որդին Դաւիթը տափղ նուագել գիտէ. ան արժանատր, խոհեմ եւ գեղեցիկ անձ է, ինչպէս նաեւ՝ քաջ մարտիկ, եւ անմիջապէս կը հասկնաս, որ Աստուած իրեն հետ է։

Սաւուղը մարդ ուղարկեց, որ Դաւիթը պալատ բրեն։ Դաւիթը պալատ մնալով Սաւուղի անտրամադիր պահերուն տափղ կը նուագէր, որ թագաւորը սփոփուէր։

ՊԱՏԱՆԻՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ





Ջափագովական 9

ՆՈՐՔՆ ՄԵՂՔԻ ՄԱՍԻՆ...

Երբ Գանատա ուղարկուեցայ, հովուական առաքելութեամբ, նոր միջավայրիս ընտելանալու, ուսումնական կեանքս ընթացքի մէջ դնելու եւ պետական թղթաբանական հարցերով զբաղելու գլխապտոյտին մէջ էի: Օր մը, երբ պետական գրասենեակ դիմած էի, առողջապահական ապահովագրութեանս թուղթերը կարգի դնելու համար (OHIP), կին պաշտօնեան նախ հարցուց թե՛ ինչ էր զբաղումս, պատասխանեցի՝ հոգեւոր հովիւ, ապա՝ անմիջապէս ւեւցուց թե՛ ինչ էր SIN (Social Insurance Number) ընկերային ապահովագրութեան թիւա: SIN անգլերէնով կը նշանակէ նաեւ՝ «մեղք»: Ես ալ իմ թմրած ու մթազնած ուղեղովս, կարծելով թէ կը փորձէ կատակել հետս եւ որպէս հովիւ՝ մեղքերուս մասին կը հարցնէ, զուարթաբանութեամբ մը պատասխանեցի՝ «Օ՛, մեղքերս բազմաթիւ են»: Ազնուափայլ տիկինը, գիթէն վար սահած ակնոցներուն վերէն շեշտակիօրէն ինծի նայելով՝ կրկնեց. «Ձեր ընկերային ապահովագրութեան թիւին մասին կը հարցնեմ, պարոն:» Խայտառակութիւնս չնկարագրեմ...

Թէեւ բոլորս ալ մեղքեր ունինք, սակայն մեղքը ընդունելու չկամութիւն մըն ալ ունինք: Կամ այն է որ՝ ուրիշին վրայ կը բարդենք մեր մեղքին պատասխանատուութիւնը եւ կամ՝ մենք մեզ կ'արդարացնենք ըսելով, թե՛ «Ի՛նչ կայ որ. ամէն մարդ կ'ընէ:» Այո, հաճելի բառ մը չէ «մեղքը», ասոր համար ալ կը փորձենք արդարացնել զայն, կամ՝ շաքարապատել եւ կամ՝ ուրանալ անոր գոյութիւնը: Բայց եւ այնպէս, պէտք է հասկնանք թե՛ անիկա կործանարար է. մեղքը կը կործանէ մեր միտքը, մեր մարմինը եւ մեր հոգին, անիկա կը կործանէ մեր ընտանեկան եւ ընկերային յարաբերութիւնները, մեր գործն ու կեանքի սապարէզները: Մեղքը մեծագոյն եւ յոռեգոյն թշնամին է մարդկութեան եւ արմատը՝ մեզ շրջապատող բոլոր չարիքներուն:

Ի՛նչ է մեղքը:

Աստուածաշնչական հասկացողութեամբ՝ մեղքը Աստուծոյ դէմ օրինազանցութիւն է (Ա. Յովհաննէս 3.4) եւ ըմբոստութիւն (Բ. Օրինաց 9.7, Յեսու 1.18): Մեղքին ծագումը կը հասնի մինչեւ առաջին մարդիկը, Ադամն ու Եւան:

Մեղքը կեանքի նպատակէն շեղումն է: «Մեղք» բառին բնագրային Յունարէնը՝ «Համարթիա» է, որ կը նշանակէ՝ «նշանակէտէն վրիպել», «թիրախը չխոցել»:

Մեղքը կ'ազդէ մեր վրայ երեք փորձութիւններու ճամբով.- աչքի ցանկութեան, մարմինի ցանկութեան եւ հոգիի հպարտութեան ճամբով: Նոյն այն փորձութիւնները՝ որոնցմով ինկաւ առաջին մարդը (տես՝ Ծննդոց 3), եւ զորս յաղթահարեց Յիսուս (տես՝ Մատթէոս 4):

Մեղքը միայն առաջին մարդոց հարցը չէր: Պօղոս առաքեալ կը գրէ.- «Բոլոր մարդիկ մեղանչեցին եւ Աստուծոյ փառքէն զրկուած կը մնան [...]» (Հռոմայեցիս 3.23): Հիմնաւորումը թե՛ սկզբնական մեղքը ամբողջ մարդկութեան տարածուած է այն է, որ մենք բոլորս ալ մահկանացու ենք, ուրեմն՝ մեղքի «վարակը» մեր մէջն է, որուն հետեւանքով կը մահանանք:

Եթէ, ուրեմն, մեղքը այսքան վնասակար է, ինչո՞ւ, հապա, կը շարունակենք մեղանչել: Որովհետեւ մեղքը հաճոյքի պատրանքով կը ներկայանայ մեզի: Բայց ինչո՞ւ Աստուած միանգամընդմիշտ չի ջնջեր մեղքը, աշխարհի երեսէն: Որովհետեւ, մեղքը բնաջնջելու համար՝ Աստուած պէտք է մեղաւորները ջնջէ, այսինքն՝ ամբողջ մարդկութիւնը:

Արդ, քանի որ ծնած ենք մեղքով, անհրաժեշտ է որ վերածնինք՝ հոգեւոր վերածնունդով մը, Մկրտութեան սուրբ խորհուրդին միջոցաւ: Կը նմանի մեր համակարգիչները (computer) վերաթարմացնելուն, «re-start» կամ «reboot» ընելուն:

Մեղքէն ձերբազատելու յոյս կայ:

«Հարցին սիրտը՝ սրտի հարց է», ըսուած է. ուրեմն՝ պէտք է այնտեղէն սկսի: Մեր սիրտը ապականած է մեղքով (Երեմիա 17.9-10), իսկ անիկա կը մաքրուի՝ զղջումով եւ ապաշխարութեամբ: Կը նմանի 180 աստիճան շրջադարձ կատարելուն (U-Turn):

Ճիշտ է, որ ժառանգած ենք նախաստեղծներուն մեղքը. ճիշտ է, որ անոր պատիժը նաեւ մենք կը կրենք, որովհետեւ կը մեղանչենք ամէն օր, բայց հիմա ունինք մեղքին դիմադրելու կարողութիւնը, մեր մէջ ներբնակուած Սուրբ Հոգւոյ միջոցաւ, որ մեզի կ'օգնէ, մեզ կը զօրացնէ եւ կը մխիթարէ: Ու թէեւ դարձեալ մեղանչենք, չվարանինք անմիջապէս խոստովանելու մեր մեղքը Աստուծոյ եւ վերահաստատելու մեր յարաբերութիւնն Անոր հետ.- «Եթէ խոստովանինք մեր մեղքերը, վստահ եղէք՝ թէ Աստուած, որ արդար է, պիտի ներէ մեր մեղքերը եւ մեզ պիտի սրբէ մեր բոլոր անիրաւութիւններէն:» (Ա. Յովհաննէս 1.9):

Առիթով մը, Փարիսեցիներ պոռնիկ կին մը կը բերեն Յիսուսին, տեսնելու համար թե՛ ան քարկոծման պիտի դատապարտէր զայն, ըստ Մովսիսական Օրէնքին: Յիսուսի պատասխանը կ'ըլլայ.- «Ձեր մէջէն անմեղը թող ի՞նք առաջին քարը նետէ անոր վրայ» եւ բոլորն ալ մէկ առ մէկ կը հեռանան: Յիսուս կ'նոջ կ'ըսէ.- «Ես ալ քեզ չեմ դատապարտեր. գնա՛ եւ ասկէ ետք մի՛ մեղանչեր:» (տես՝ Յովհաննէս 8):

Նոյն մեղքը յաճախակի կրկնելէն յոգնած ես եւ ինքզինքդ կը դատապարտեմ: Կորսնցուցած ես ճամբադ, նպատակդ եւ խաղաղութիւնդ: Յիսուս չի դատապարտեր քեզ: Ան քեզի ւաեյի մօտ է քան երբեք: Ան կ'ուզէ զօրացնել եւ մխիթարել քեզ իր Սուրբ Հոգիով: Ան քու անխոջ դատապաշտպանդ է եւ քեզի պիտի ըսէ այն՝ ինչ որ ըսաւ մեղաւոր կնոջ.- «Ես ալ քեզ չեմ դատապարտեր. գնա՛ եւ ասկէ ետք մի՛ մեղանչեր:»

Կ'ուզես վայելել ներուած ըլլալու զգացումը: Գնա՛ Յիսուսին, երբեք ուշ չէ Անոր հետ ծանօթանալու՝ աղօթքի մտերմութեան մէջ: Ան միակն է, որ հակաթոյնը ունի մեղքին:

Որքան ւաեյի երկար մնանք մեղքի մէջ, անիկա այնքան ւաեյի ընդունելի կը դառնայ եւ այնքան ւաեյի կը հեռանանք Աստուծմ:

Կոնակդ դարձուր մեղքին եւ դարձի՛ր առ Աստուած:

Հայր Գեղարդ

Յ. Գ. մեզի ուղարկեցէք Աստուծոյ եւ ձեր հաւաքի ճանապարհորդութեան մասին ձեր ունեցած հարցումները:

Apologetics 9

WHAT IS YOUR SIN NUMBER?

When I first came to Canada, I juggled my pastoral duties, theological studies, and governmental paperwork in the first few months. One day, my head so heavy and my brain hazy, I went to this office to apply for my OHIP card, the lady at the counter asked about my occupation; I said, “I’m a pastor,” and immediately after, she said, “what is your sin number”; with my hazy brain, I thought she is humouring me and asking me if I, as a pastor, have committed sins, so I returned the humour and said; “oh my sins are too many.” With her glasses down her nose, she gazed at me and said: “Sir, your Social Insurance Number”; no need to describe my embarrassment...

Yes, we all have SIN numbers or rather a number of sins, and yet it’s so hard for us to admit it. We either put the responsibility of our sin on others, or we justify ourselves by rationalizing our sin and saying, “Well, eveyrbody does it”. I know “sin” is not a pleasant word ad that’s why we try to justify it, sugar-coat it, or live in denial about it, but we need to understand that there’s a destructive power to it; sin destroys our mind, our body and our soul. It destroys families and friendships, and couriers. It is the worst enemy of humanity and the root cause of everything evil around us.

What is “sin”?

The Biblical understanding of sin is as a transgression of the law of God (1 John 3:4) and rebellion against God (Deuteronomy 9:7; Joshua 1:18). It goes back to the story of Adam and Eve.

Most of all, sin is the loss of and the divergence from the purpose and meaning of life; the word for “sin” in the New Testament original Greek language is “Hamartia” (greek ἀμαρτία), which carries within it the covert meaning of “missing the mark”.

Sin can have its influence on our lives through the three main temptations, which are: the desire of the eyes, the lust of the flesh, and the pride of the spirit; these were the things Adam and Eve were tempted with and fell (see: Genesis 3), and these are the same temptations Jesus faced and overcame (see: Matthew 4).

Sin was not exclusively the problem of Adam and Eve; Apostle Paul writes: “For everyone has sinned; we all fall short of God’s glorious standard.” (Romans 3:23). The main argument that the original sin has affected all of humanity is that “the wages of sin is death” (Romans 6:23) and we all are mere mortals; hence, the sin “virus” is in all of us.

So, why do we keep sinning if sin is such a bad thing? Because there’s pleasure attached to it! But why doesn’t God remove sin from the world? Removing sin would mean eliminating all the sinners, and that would be destroying humanity in general.

Since we are born in sin, we must be born again and from above, from God, a spiritual birth through the sacrament of Baptism (See: John 3:1-8). It is like rebooting our computers; sometimes, all we can do is just shut it off and restart it all over again, and there you go, all is good and functioning correctly.

Is there hope?

“The heart of the matter is a matter of the heart”; we need to start there; our hearts are corrupted by sin (Jeremiah 17.9-10). How to get rid of that corruption? The process is called “repentance”; it’s like making a U-turn, turning back on sin and toward a loving, merciful, and understanding heavenly Father.

Yes, we have inherited the original sin of our ancestors; yes, corruption has been imputed to us; yes, we sin every day, by our own will, but now we also have the power to resist sinning because the power of the Holy Spirit, who dwells within us, will assist and strengthen and comfort us. Yet, if we sin again, we should not hesitate and immediately confess our sins to God and ask for forgiveness, and thus restore our fellowship and communion with Him. “If we confess our sins, He is faithful and just to forgive us and cleanse us from all unrighteousness.” (1 John 1:9).

There’s this touching story in the gospel of John. Pharisees bring an adulterer woman to Jesus to see if he will condemn her to death by stoning, according to the Mosaic law. Jesus responded, “‘Let the one who has never sinned throw the first stone!’ [...] When the accusers heard this, they slipped away one by one [...]. Then, Jesus stood up again and said to the woman, ‘Where are your accusers? Didn’t even one of them condemn you?’ ‘No, Lord,’ she said. And Jesus said, ‘Neither do I. Go and sin no more.’” (Full story: John 8:1-11).

Have you been struggling with sin and losing the battle lately? Have you been condemning you for a specific sin? Do you feel you’ve lost your path, purpose, and peace? Jesus does not condemn you. He is closer to you than ever and ready to strengthen and comfort you with his Holy Spirit. He’s your fierce advocate and will set you free and tell you the same thing: “Neither do I [condemn you]. Go and sin no more.”

Coming back to my embarrassing story, what is your SIN number? Besides your social insurance number, do you have the assurance of the forgiveness of your sins? Do you know Christ? And I don’t mean if you’ve heard about him, do you KNOW him? If not yet, it’s never too late; go to him in prayer; only he has the antidote to our sins.

The more we stay in sin, the easier it becomes; the longer we remain in sin, the farther we stray from God. Make that U-Turn!

Fr. Keghart

P.S. Send us your questions concerning God and your journey of faith.

ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻԷՆ

Տնոր որ հասկնամ անքննելի քու կամքդ, Հայր իմ սիրելի: Կը փորձես զիս իբրեւ որդի. որպէսզի իմ մէջս առաքինութիւններու աղանանդը յայտնես. եթէ այդ է, այնպէս ըրէ՛ որ փորձութեան կսկիծին մէջ եւ չարին այլասերող ոյժին դիմաց՝ դառնութեամբ ու չարով չպղտորի իմ հոգիս, այլ զօրացնրդ զիս եւ թոյլ տուր՝ որ իմ տկար միտքիս համար անհասկնալի եւ գերիվեր արդարութեանդ պատմողը ըլլամ ու ճշմարտութեանդ եւ իրաւունքիդ հաւատարիմ մարդտիղդ դառնամ: Անդրադարձի առիթ կու տաս, որպէսզի յիշեմ հաւատքի իմ կոչումս. շնորիէ որ ճանչնամ քու շնորհքդ, եւ ներութիւններուս տագնապին մէջ իսկ քու անունդ օրհնեմ ու փառաբանեմ, քու օրինութիւնդ ժառանգելու համար: Կը քննեմ զիս՝ քու մաքրական ու սրբարար կրակիդ աղտեղախանձ բովին մէջ, եւ սրբոթեան առիթ կու տաս, որպէսզի մարմնական չարչարանքներու եւ նեղութեանց փորձառութեամը դադրիմ այլեւս մեղանչելէ. պարգեւէ որ ալ մոռնամ աշխարհային ցանկութիւնները, կեանքիս բոլոր օրերուն քու կամքիդ համաձայն ապրիմ եւ քու բազմատեսակ պարեւներուդ տնտեսը դառնամ ուրիշներուն համար: Քու Որդիիդ փրկրագործական չարչարանքներուն մասնակից կը դարձնես անարժանս. ինչ գերազանց շնորհք է այս. տնոր Աստուած իմ, տնոր որքան որ կամենաս, թող քու օրհնեալ կամքդ ըլլայ: Բայց անոնց հետ միասին՝ մխիթարիչ Սուրբ Հոգիիդ պարգեւներով թոյլ տուր որ ուրախութեամբ կարենամ ընդունիլ եւ կրել զանոնք. մեզի համար քու պատրաստած անպատմելի փառքիդ ճաշակը առնեմ անոնց մէջէն, եւ անոնց մէջ տեսնեմ երկրի վրայ քու փառաւորումդ, Որդիին եւ Սուրբ Հոգիին հետ միասին. այժմ եւ միշտ եւ յափտեանս յափտենից: Ամէն:





ԽԱՉՎԵՐԱՑ ԿԱՄ ՎԵՐԱՑՄԱՆ ԽԱՉ

«Փայտ կենաց, որ փոխանակ մահացու
պողոյն գՔրիստոս պողաբերեցեր»
(Շարական)

Ընդհանուր Եկեղեցւոյ պատմութեան մէջ խաչը հաչեալով փառաւորուած է եւ դարձած՝ փրկագործութեան հիմնական նշանը: Քրիստոնէութեան նախնագոյն դարերուն, պաշտամունքի առարկայ դարձած է անիկա եւ մնայուն ներկայութիւն՝ առաքեալներու եւ հաւատացեալներու կեանքին մէջ: Խաչի Վերացման եւ փառաւորման առաջին առիթը մեզ կը տանի մինչեւ առաքելական շրջան: Յակոբ Տեառնեղբայր Առաքեալ, որ Երուսաղէմի առաջին եպիսկոպոսը եղած է, իրեն կը վերագրուի առաջին Խաչի Վերացումը՝ բարձրացումը ի տես հաւատացեալ ժողովուրդին, եւ այս առիթով իսկ ան որպէս փառաբանանք Խաչին՝ ըսած է.- «Խաչի քո Քրիստոս, երկիրպագանեմք ...» օրհնութիւնն ու աղօթքը: Անշուշտ այդ թուականին տակաւին չէր կատարուած Խաչին Գիւտը: Կ'ենթադրուի որ, որպէս կրկնօրինակ քառաթեւ խաչի մը բարձրացումը ու փառաւորումը կատարած է ան: Խաչի Վերացման եւ փառաւորման երկրորդ առիթը եղած է անոր Գիւտը Հեղինէ թագուհիին կողմէ, որուն մասին անդրադարձած ենք: Իսկ Խաչի երրորդ Վերացումը տեղի ունեցաւ անոր գերութենէն դարձի ժամանակ, 628 թուականին: 610 թուականին, Երուսաղէմ քաղաքը Պարսիկներու կողմէ գրաւուեցաւ եւ զանազան հարստութեանց կողքին Խաչափայտը եւս կողոպտուեցաւ եւ որպէս առար գերի տարուեցաւ Պարսկաստան: 627 թուականին Բիզանդիոնի Հերակլ կայսրը յաղթելով պարսից բանակին, Խաչափայտը ազատագրեց գերութենէ եւ մեծ ու շքեղ հանդիսութեամբ բերաւ Երուսաղէմ եւ տեղադրեց Ս. Յարութիւն տաճարին մէջ: Խաչի Վերացման երրորդ այս առիթը կոչուեցաւ նաեւ Խաչվերաց եւ դարձաւ մեր Եկեղեցւոյ հինգ Տաղաւար տօներէն մին: Ամէն տարի Սեպտեմբեր ամսուան 14-ի մօտաւոր Կիրակին, Հայ Եկեղեցին մեծ շուքով կը տօնախմբէ վերոյիշեալ՝ Խաչի երեք վերացումներուն փառաւորանքը:

ՏԿԱՐԸ ԵՒ ԶՕՐԱԽՈՐԸ

Արջը մրջինի բոյնը կը փորէր եւ լեզուով կը հաւաքէր եւ կ'ուտէր մրջինները: Մրջինը ճարը կը գտնէ զայն սպաննելու: Կ'երթայ պիճակին, գոռելիին, մժեղին, շանաճանճին, բրէտին [իշամեղու] եւ ասոնց նմաններուն մօտ եւ անոնք որպէս ազգակից կ'աղաչէ, որ օգնեն իրեն: Անոնք կը ցաւակցին, կը հարուածեն արջին աչքերն ու ականջները: Արջը զլուխը քարին կը զարնէ, վէրք յառաչ կու գայ եւ կը նեխի, որդեր կը յառաջանան: Յափ սաստկութենէն բերանը բացած արջը կը գոռայ: Միջատները բաց բերանէն փորը մտնելով աղիքները կը խոցոտեն: Արջը նեղուած կը դիմէ հոսող ջուրերու եւ այնքան խորունկ կը մտնէ, որ կը խեղդուի:

Այս առակին ոյժը կը կայանայ հետեւեալին մէջ. զօրաւորները չեն վախնար եւ կ'արհամարհեն տկարները: Սակայն տկարները իմաստութեամբ՝ կը զօրանան եւ կը յաղթեն հզօրները: Այս առակը կը ցուցանէ, որ զօրեղները պէտք է վախնան տկարներու իմաստութենէն:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

Հայ ազգը երբ քրիստոնեայ եղաւ:

Քրիստոնէութիւնը սկիզբէն մօտեց գործեց Հայաստան, շնորհիւ Սուրբ Թադէոս եւ Սուրբ Բարթողոմէոս առաքեալներուն:

Այդ սրբազան առաքեալները Հայաստանի մէջ ինչեք ըրին:

Սուրբ Թադէոս բժշկեց Աբգար թագաւորի հիւանդութիւնը. մկրտեց զայն եւ իր ընտանիքը, եկեղեցիներ շինեց եւ եպիսկոպոսներ ձեռնադրեց: Սուրբ Բարթողոմէոս առաքեալ Անձեւացեաց գաւառին մէջ Հոգեաց վանքը հիմնեց, նաեւ կառուցեց շատ մը եկեղեցիներ եւ քահանաներ ձեռնադրեց:

Հայաստանի մէջ քրիստոնէութեան գլխաւոր թշնամին ո՞վ եղաւ:

Սուրբ Աբգար թագաւորի քեռորդին՝ Սանատրուկը, որ ուրանալով քրիստոնէութիւնը՝ նորէն կռապաշտութեան դարձաւ, եւ մեռցնել տուաւ Սուրբ Թադէոս եւ Բարթողիմէոս առաքեալները, իր աղջիկը՝ Սուրբ Սանդուխտ Կոյսը, եւ ուրիշներ:

Ուրեմն քրիստոնէութիւնը խաբանուեցաւ Հայաստանի մէջ:

Հակառակ ամէն տեսակ հալածանքներուն, քրիստոնէութիւնը ծածուկ մնաց եւ աստիճանական կերպով տարածուեցաւ, մինչեւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ:

Ո՞վ է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ:

Սուրբ Գրիգոր Հայոց երկրորդ Լուսաւորիչն է, որ 301 թուականին հայ ազգը քրիստոնէութեան դարձուց եւ կռապաշտութիւնը ջնջեց:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ որո՞ւ ձեռամբ Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ:

Սուրբ Գրիգոր Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Կեսարիոյ Սուրբ Ղեւոնդ Հայրապետէն, որ Թադէոս առաքեալը ձեռնադրած Թէոփիլոս Եպիսկոպոսին յաջորդներէն էր:

ՏՕՆԱՑՈՅՑ - ՍԵՊՏԵՄԲԵՐ

- Ուրբ. 1 Սեպտեմբեր – Պահք:
Շբթ. 2 Սեպտեմբեր – Տօն Սրբոց առաքելոցն՝ Յակոբայ եւ Շմաւոնի:
Կիր. 3 Սեպտեմբեր – Դ. զկնի Վերափոխման:
Բշ. 4 Սեպտեմբեր – Տօն Սրբոցն՝ Անդրէի զօրավարին եւ բանակի նորին, եւ վկայիցն՝ Կալինիկոսի եւ Դոմետայ:
Գշ. 5 Սեպտեմբեր – Տօն Սրբոցն՝ Անդրիանոսի եւ կնոջ նորա Անատոլեայ եւ վկայիցն՝ Թէոդորոսի եւ Ելեթիւրոսի:
Դշ. 6 Սեպտեմբեր – Պահք:
Եշ. 7 Սեպտեմբեր – Տօն Սրբոցն՝ Աբրահամու եւ Խորէնայ եւ անարծաթ բժշկացն՝ Կոզմայի եւ Դամիանոսի եւ Աստուածատրոյ վկային:
Ուրբ. 8 Սեպտեմբեր – Պահք: Տօն Ծննդեան սուրբ Կուսին Մարիամու Աստուածածնին ի յԱննայէ:
Շբթ. 9 Սեպտեմբեր – Տօն Նիկիոյ Սուրբ Ժողովոյն երեք հարիւր ութսուսան հայրապետացն:
Կիր. 10 Սեպտեմբեր – Ե. զկնի Վերափոխման: Բարեկենդան Ս. Խաչի Պահոց:
Բշ. 11 Սեպտեմբեր – Ա. օր Սուրբ Խաչի Պահոց:
Գշ. 12 Սեպտեմբեր – Բ. օր Սուրբ Խաչի Պահոց:
Դշ.. 13 Սեպտեմբեր – Գ. օր Սուրբ Խաչի Պահոց:
Եշ. 14 Սեպտեմբեր – Դ. օր Սուրբ Խաչի Պահոց:
Ուրբ. 15 Սեպտեմբեր – Ե. օր Սուրբ Խաչի Պահոց:
Շբթ. 16 Սեպտեմբեր – Տօն է սրբոյ Եկեղեցւոյ ի նաւակատիս սրբոյ Խաչին:
Կիր. 17 Սեպտեմբեր – Տօն Վերացման Սրբոյ Խաչին:
Բշ. 18 Սեպտեմբեր – Տօն Ս. Խաչի: ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ:
Գշ. 19 Սեպտեմբեր – Տօն Եկեղեցւոյ:
Դշ. 20 Սեպտեմբեր – Տօն Եկեղեցւոյ:
Եշ. 21 Սեպտեմբեր – Տօն Եկեղեցւոյ:
Ուրբ. 22 Սեպտեմբեր – Պահք: Տօն Սուրբ Խաչի:
Շբթ. 23 Սեպտեմբեր – Տօն Սուրբ Խաչի:
Կիր. 24 Սեպտեմբեր – Բ. զկնի Սուրբ Խաչի: Բարեկենդան
Բշ. 25 Սեպտեմբեր – Վարազայ Սուրբ Խաչի Պահոց:
Պահք: Սրբոցն՝ Մամասայ եւ Փիլիկտիմոնի եւ Սիմէոնի Սինակեցւոյն:
Գշ. 26 Սեպտեմբեր – Սրբոց կուսանացն՝ Փեքրոնեայ, Մարիանեայ եւ Շուշանայ՝ դստեր մեծին Վարդանայ:
Դշ. 27 Սեպտեմբեր – Պահք:
Եշ. 28 Սեպտեմբեր – Տօն Սրբոց հայրապետացն՝ Բարադամու, Անթիմոսի եւ Երանոսի:
Ուրբ. 29 Սեպտեմբեր – Պահք:
Շբթ. 30 Սեպտեմբեր – Տօն Սրբոցն Գէորգայ զօրավարին եւ ոկտոսի եւ Ռոմանոսի երգեցողին:

ՎԱՐԱԳԱՅ ՍՈՒՐԲ ԽԱՉ

Աստուածորդւոյն Սուրբ Խաչին նուիրուած տօներէն մին է Վարազայ Սուրբ Խաչը, որ զուտ հայկական ծագում ունի եւ նուիրագործուած է հայկական ասանդութեամբ:

Հռիփսիմեանք երբ փախուստ կու տային Կոստանդիանոս Կայսրի հալածանքներէն, ասանդութիւնը կը պատմէ թէ Սուրբ Հռիփսիմէի մօտ Աստուածորդւոյն խաչափայտէն մասունք մը կը գտնուէր, որ ապահովութեան համար զայն պահած էր Վարազայ լերան բարձունքին՝ Գալիլեա կոչուած ժայռին մէջ:

653 թուին, Վարազայ վանքին մէջ ճգնող Թոդիկ մենակեացը, իր ճգնողական սրբակենցաղ կեանքով վերացած՝ տեսիլքի մը ընդմէջէն ականատես դարձաւ, թէ ինչպէս Վարազայ լերան բարձունքէն լուսաճաճանչ Խաչին նշանը եկաւ եւ հանգչեցաւ Վարազայ վանքի եկեղեցւոյ Սուրբ Սեղանին վրայ:

Առաջին հերթին, Թոդիկ իր հետ ճգնող Յովելի ընկերակցութեամբ եկեղեցի փութաց եւ երկուքը ականատես դարձան աստուածային հրաշքին: Ապա, շրջակայ բոլոր գիւղերէն եւ Վան քաղաքէն ուխտաւորներ, լսելով հրաշապատում այս դէպքը, վանք եկան եւ աղօթքով ու երկրպագութեամբ փառաւորեցին աստուածային Ս. Նշանին երեւումը:

Ժամանակակից հայոց Հայրապետը՝ Ներսէս Գ. Շինող Կաթողիկոս, նուիրագործեց Աստուածորդւոյն Սուրբ Խաչի նշանին յայտնուիլը եւ հաստատեց Վարազայ Սուրբ Խաչի տօնը:

Խաչի այս տօնը ընդհանրապէս կոչուած է Սուրբ Նշան եւ յետագային կառուցուած զանազան եկեղեցիներ նուիրուելով Վարազայ լերան բարձունքին աստուածային ճառագայթող Նշանին, անուանակոչուած են Սուրբ Նշան Հայ Եկեղեցի:

Վարազայ Սուրբ Խաչի տօնը Հայ Եկեղեցին կ'ոգեկոչէ ամէն տարի Վերացման Սուրբ Խաչի տօնէն 15 օր ետք:



Ազգային Առաջնորդարան
Armenian Prelacy of Canada
Prélature Arménienne du Canada



514-856-1200
prelacy@armenianprelacy.ca
www.armenianprelacy.ca



Խմբագիր՝ Հոգեշնորհ Տ. Յակոբ Վրդ. Եագուպեան
3401 Olivar Asselin Montréal, Quebec H4J 1L5